600.0074.29.10.02

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 հոկտեմբերի 2002 թվականի N 74Ա
ք. Երևան

ՋԵՐՄԱՅԻՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ՍԱԿԱԳՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի ա) ենթակետը, 21-րդ, 22-րդ հոդվածները, ելնելով 2002-2003 թվականների ձմռան ժամանակաշրջանում Հայաստանի Հանրապետությունում ջեռուցման ապահովման անհրաժեշտությունից, Հայաստանի Հանրապետության էներգետիկայի կարգավորող հանձնաժողովը **ո ր ո շ ու մ է .**

1. Սահմանել՝

ա) 2002-2003 թվականների ձմռան ժամանակաշրջանում ջերմային էներգիա մատակարարող ընկերությունների կողմից իրականացվող կենտրոնացված ջեռուցման հետևյալ սակագները՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը.

N	Ընկերության անվանումը	Ջեռուցման տևողությունը (օր)	2002-2003 թվականների սակագները		
			Բնակչության ջեռուցման համար		Այլ սպառողների ջեռուցման համար (դրամ/ԳՋ)
			(դրամ/մ^2)	(դրամ/ԳՋ)	
1	Երևանի քաղաքապետարանի «Ջերմային տնտեսություն» փակ բաժնետիրական ընկերություն	90	1651	2905	2905
2	«Երևանի ՋԷԿ» փակ բաժնետիրական ընկերություն	90	1662	2923	2923
3	«Գյումրու ջերմամատակարարում» փակ բաժնետիրական ընկերություն	120	2573	2497	2497
4	«Հայգազարդ» փակ բաժնետիրական ընկերության-ի «Գյումրիջերմո» մասնաճյուղ (գ. Մայիսյան)	90	1640	-	-

5	«Հրազդանի քաղաքային համայնքի ջերմամատակարարման տնտեսություն» փակ բաժնետիրական ընկերություն	120	1709	2049	2049
6	Սևանի քաղաքապետարանի թիվ 1 «Ջերմամատակարարում» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն	120	2130	2448	2460

բ) 2002-2003 թվականների ձմռան ժամանակաշրջանում «Հայգազարդ» փակ բաժնետիրական ընկերության «Գյումրիջերմո» մասնաճյուղի կողմից ջեռուցման նպատակով առաքվող ջերմային էներգիայի սակագինը՝ 2018,6 դրամ/ԳՋ 120 օրվա համար՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը.

գ) 2002-2003 թվականների ձմռան ժամանակաշրջանում «Հրազդանի ՋԷԿ» փակ բաժնետիրական ընկերության կողմից ջեռուցման նպատակով առաքվող ջերմային էներգիայի սակագինը՝ 1751,0 դրամ/ԳՋ 120 օրվա համար՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը:

2. Բնակչությանը առաքվող ջերմային էներգիայի՝ մեկ մ^2 բնակելի մակերեսի համար սահմանված սակագինը կիրառելի է ջերմային էներգիայի հաշվառքի սարքերի բացակայության դեպքում: Հաշվառքի սարքերի առկայության դեպքում գործում է մեկ ԳՋ-ի համար սահմանված սակագինը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2002 թվականի նոյեմբերի 29 -ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Վ. ՄՈՎՍԵՍՅԱՆ**

ք. Երևան
29 հոկտեմբերի 2002 թ.